03040727 – 686

# ՏԱՐԱԾՔ-ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆԻՆՆԻՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԵՐԵՔ ԹՎԱԿԱՆԻ

29.04.2003թ.

«ՎԱՃԱՌՈՂ »՝ ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ,
Անձնագիր՝ [redacted]
Բնակվող՝ ք.Երևան, Ռոստոմյան 2 տանը ,

«ԳՆՈՐԴ»՝ ՀԵՆՐԻԿ ՀԱՅՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ,
Անձնագիր՝ [redacted]
Բնակվող՝ ք.Երևան, Օհանովի 8-46 ,
ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ՝

1. «ՎԱՃԱՌՈՂԸ(ՆԵՐԸ) » ՎԱՃԱՌԵՑ (ԻՆ)
Ք.Երևան,Շիրազի փողոցին հարող տարածքի-հողամասը,
որը բաղկացած է 0.2 հա (2000-երկու հազար քմ),
իսկ «ԳՆՈՐԴԸ(ՆԵՐԸ) » ԳՆԵՑ (ԻՆ) վերը նշված տարածքի-հողամասը ամբողջությամբ:

2. Նշված տարածքի-հողամասը պատկանում է «ՎԱՃԱՌՈՂԻՆ»՝ Պ/Ն կողմից 23.04.2003թ. տրված 847 հող.ուղղ. վաճ. պայմանագրի և ՀՀ Կառավարությանն Առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման կողմից 28.04.2003թ. տրված 1637716 վկայականի հիման վրա:

3. Նշված տարածքի-հողամասը վաճառվում է 27.000 (քսանյոթ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով, որպիսի գումարը ստացավ «ՎԱՃԱՌՈՂԸ» «ԳՆՈՐԴԻՑ» ամբողջությամբ:

ՀՀ. Հողային օր. 53 և 54 հոդվածների բովանդակությունը նոտարի կողմից բացատրված է:

5. Մինչ սույն պայմանագրի կնքումը նշված տարածքի-հողամասը ոչ ոքի չի վաճառվել, գրավ չի դրվել, արգելանքի (կալանքի) տակ չի գտնվել, համաձայն՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից 29.04.2003թ. տրված ԱԱ 024256 միասնական տեղեկանքով:

6. ՀՀ գույքահարկի մասին օրենքի 14 հոդվածի համաձայն նոր սեփականատիրոջն են անցնում օտարման պահի դրությամբ օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները (գույքահարկ):

7. ՀՀ Հողային օր. 53 հոդվածի համաձայն վերը նշված հողակտորի սեփականության իրավունքի փոխանցումը «ԳՆՈՐԴԻՆ» ենթակա է պետական գրանցման :

8.Սույն պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման 30 (երեսուն) օրյա ժամկետում :

9. Պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը կատարվում են ԳՆՈՐԴԻ կողմից:

10. Սույն պայմանագիրը հաստատված է 4 (չորս) օրինակից, որոնցից առաջինը պահվում է Աջափնյակ նոտարական տարածքի գրասենյակում, երկրորդը՝ Անշարժ գույքի կադաստր պետ.կոմ. համապատասխան տարածքային ստորաբաժանումում, իսկ մեկական օրինակներ տրվում են կողմերին:

11.Գնվող տարածքի-հողամասը հանդիսանալու է ամուսինների՝ ՀԵՆՐԻԿ ՀԱՅՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ և ՍԻԼՎԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ համատեղ սեփականությունը, համաձայն՝ 1-ՍԼ h.333711 ամուսնության վկայականի:

12.Պայմանագրի բովանդակությունը պետ.նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերին, պայմանագրի բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ______________________
______________________

Երկու հազար երեք թվականի ապրիլի քսանինննին, սույն պայմանագիրը վավերացված է իմ «Աջափնյակ» նոտարական տարածքի նոտար՝ ______________________ կողմից:

Կողմերը առուվաճառքի պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված են, գործունակությունը պարզված, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ

քաղ. ______________________ -ի իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղ. օր. 563 հոդվածի համաձայն, սույն պայմանագից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պատական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 (երեսուն) օրյա ժամկետում:

Գրանցված է սեղանամատյանում ______________ ով

Գանձված է պետական տուրք ______________

Նոտար ______________

*84145877*